ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1955 Общественные науки

Գ. Ջիգրանով, Մ. Մուրադյան

ԿՈՄԻՏԱՍԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱՅԻ ՁԵՌԱԳԻՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի ձեռագիր ֆոնդերում պահպանվում է հայ մեծանուն կոմպոզիտոր, ազգային կլասիկ երաժշտության հիմնադիր Կոմիտասի ընդարձակ արխիվը, որն անընդհատ լրացվում է նոր նյութերով և պարունակում է Կոմիտասի բազմաթիվ ձեռագրերը՝ ժողովրդական երգերի ձայնագրումներ ու մշակումներ, կոմպոզիտորի օրիգինալ ստեղծագործությունները, գիտական զեկուցումների տեքստերը, ծոցատետրերը, էսքիզները, սևագրերը, առանձին ստեղծագործությունների տարբերակները, նամակներ, կոմպոզիտորի կյանքին ու գործունեությանը վերաբերող վավերագրեր և այլ նյութեր։ Արխիվում կան նաև Կոմիտասի անձնական գրադարանի գրքերն ու նոտաները, նրա երաժշտական գործիքները, ժամանակակիցների հիշողությունները և այլն։ Թեև Կոմիտասի արխիվը շատ հեռու է լրիվ լինելուց և բազմաթիվ նյութեր դեռևս ցրված են աշխարհի չորս կողմը, բայց այն ունի խոշոր նշանակություն մեր երաժշտական կուլտուրայի պատմության համար։ Մշտապես այդ նյութերին են դիմում Կոմիտասի ժառանգությունն ուսումնասիրողները։ Դրանց հիման վրա Արվեստների պատմության և տեսության սեկտորը նախապատրաստում է տպագրության Կոմիտասի երկերի ակադեմիական առաջին հրատարակությունը։

1946 թվականին Փարիզի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովի կողմից ուղարկված և Կոմիտասի արխիվում գտնվող նյութերի թվին են պատկանում Կոմիտասի չափազանց հետաքրքիր հեղինակային ձեռագրերը, որոնք վերաբերում են հայ ականավոր երգիծարան Հ. Պարոնյանի «Քաղաքավարության ֆնասներ»-ի հիման վրա երաժշտական պատկերներ ստեղծելու նրա աշխատանքին։ Հայ երաժշտագետների առանձին աշխատություններում հանդիպում էին հիշատակություններ այդ ձեռագրերի մասին, սակայն մինչև վերջին ժամանակներս դրանք չէին դարձել հատուկ ուսումնասիրության առարկա։ Այնինչ դրանք մեծ հետաքրքրություն են ներկայացնում՝ զգալի չափերով ընդարձակելով մեր պատկերացումը երաժշտական թատրոնի ասպարեզում Կոմիտասի կատարած աշխատանքի մասին։

Նշված ձեռագրերն իրենցից ներկայացնում են երկու լրիվ ավարտված երաժշտական պատկեր և երրորդ պատկերի սկիզբը, գրված Հ. Պարոնյանի «Քաղաքավարության ֆնասները» երգիծական երկի տեքստով։ Պարոնյանի տեքստին համապատասխան, Կոմիտասն իր այս ստեղծագործությունը նախագծել էր որպես երաժշտական-թատերական պատկերներ, որոնք ոչ այլ

ինչ են, եթե ոչ Կոստանդնուպոլսի հայերի տարբեր խավերի կենցաղի ու սովորությունների բնորոշ դծանկարներ։ Բրանք ամենայն հավանականությամբ, հանդիսանում էին Կոմիտասի մտածած երաժշտական կոմեդիայի առանձին մասերը։

Մեր կողմից պայմանականորեն վերնագրված՝ «Սեդրակ աղան կոշկակարի մոտ» առաջին պատկերի համար որպես հիմք Կոմիտասը վերցրել է Հ. Պարոնյանի «Դաղաքավարության վնասներ»-ի հինգերորդ պատկերը[1], թողնելով նրա սկզբի 16 տողը (կոշիկ պատվիրելու հետ կապված դիալոգը) և ավելացնելով Պարոնյանի նույն երկի յոթերորդ պատկերից երկու էպիզոդ՝ վաճառականի կողմից իր խանութում ապրանքները գովելու և շան ձագերի վերաբերյալ էպիզոդները։ Այս պատկերի գործող անձերն են՝ Սեդրակ աղա, կոշկակար-վարպետը, նրա աշակերտներն ու օգնականները, այցելուն (Ենոք աղա) և ուրիշներ։ Զեռագիրը ներկայացնում է հեղինակային սևագիր կլավիրային գրանցում և կազմում է կլավիրային նոտաթղթի մատիտագիր 20 էջ (62 կլավիրային տող, յուրաքանչյուրը բաղկացած 3, 4, 5, և 6 նոտային հնգագծից, ունի երկու մեծ ոևպրիզակրկնություն՝ 3 և 2,5 էջից բաղկացած)։ Մենակատարային ու խմբերգային վոկալ պարտիաները գրանցված են լրիվ, իսկ օրկեստրային կամ դաշնամուրային նվագակցությունը տրված է ցիֆրային բասի տեսքով՝ ճիշտ կերպով նշելով հարմոնիկ ֆունկցիաներն ու մոդուլացիաները (վերջինները սև թանաքով)։

Մեր կողմից դարձյալ պայմանականորեն վերնագրված՝ «Բարսեղ աղան և իր բարեկամները» (գինետանը) երկրորդ պատկերի համար հիմք է ծառայել Պարոնյանի «Դաղաքավարության վնասներ»-ի վերջին պատկերը[2]։ Ընդ որում նրա տեքստի երկրորդ մասը[3] Կոմիտասը հանել է՝ փոխարինելով այն Պարոնյանի նույն երկի երրորդ պատկերի վարսավիրի էպիզոդով[4]։ Այս երաժշտական պատկերի գործող անձերն են՝ Բարսեղ աղա, Միհրան աղա, Գարրիել աղա, գինեվաճառ, սպասավոր-մատուցող, վարսավիր և ուրիշներ։ Երաժշտական պատկերը գրված է Կոմիտասի ձեռքով, նույնպես մատիտագիր, պարտիտուրային թղթի 7 էջի վրա (40 կլավիրային տող, յուրաքանչյուրը 2, 3, 4, և 5 նոտային հնգագծից բաղկացած)։ Վոկալ պարտիաները գրանցված են լրիվ, իսկ գործիքային ընկերակցության համար ազատ տեղ է թողնված (երկուական նոտային հնգագիծ)։

Երրորդ պատկերի սկիզբը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Կոմիտասն այդ պատկերի հիմքում դրել է «Բաղաքավարության վնասներ»-ի տասներեքերորդ պատկերը, որովհետև նրա մեջ հանդես են բերված Աբրահամ աղան և Տիմոթեոս աղան՝ Պարոնյանի հիշյալ պատկերի գործող անձերը։ Գրանցումը (նույնպես մատիտագիր) պարունակում է պատկերի սկզբի 18 տակտը՝ դիալոգ վերոհիշյալ գործող անձանց միջև։

Այս բոլոր պատկերների երաժշտությունը հիմնականում ոևչիտատի-

---

[1] Հակոբ Պարոնյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, Պետհրատ, Երևան, 1931, էջ 119—122։

[2] Նույն տեղում, էջ 129 և 131—134։

[3] Նույն տեղում, էջ 226—230։

[4] Նույն տեղում, էջ 231—236։

[5] Նույն տեղում, էջ 113։

վային-դեկլամացիոն ընույթի է։ Կոմիտասը ձգտել է համարյա ամբողջությամբ պահպանել «Քաղաքավարության Վնասներ»-ի հիշյալ պատկերների տեքստը, Պարոնյանի լեզվի երգիծական սրությունը, դիպուկությունն ու ընորոշությունը, միաժամանակ հասնելով դրանց արտահայտիչ երաժշտականացմանը։ Նրա այս ձգտումները համընկնում էին ռուսական երաժշտության կլասիկների ստեղծագործական սկզբունքներին (հնարավոր է նույնիսկ հենվում էին դրանց վրա), մասնավորապես խոսակցական ինտոնացիաների երաժշտական մարմնավորման հարցում (Դարգոմիժսկի, Մուսորգսկի և ուրիշներ)։ Այս պատկերների երաժշտության մեջ Կոմիտասը բացառիկ հոգատարությամբ օգտագործել է արևմտահայ խոսակցական լեզվի և քաղաքային կենցաղային երգի ինտոնացիաները։ Գործադրած այս միջոցներով Կոմիտասը հասել է գործող անձերի երաժշտական ընութագրման անհատականացմանը, նրանցից յուրաքանչյուրի տիպական գծերի պատկերմանը։ Երաժշտական դիալոգներում և խմբերգերում Կոմիտասը ճկուն կերպով օգտագործել է բազմաձայնության հնարանքները (իմիտացիաներ, ձայների կանոնիկ մուտք և այլն)։

Թեև առայժմ մեզ չհաջողվեց ճիշտ կերպով որոշել այս երաժշտական պատկերների վրա Կոմիտասի կատարած աշխատանքի ժամանակը, բայց կարելի է ենթադրել, որ այն վերաբերում է մեր դարի առաջին տասնամյակի տարիներին, երբ Կոմիտասն աշխատում էր Էջմիածնում։ Հանգուցյալ ակադեմիկոս Հր. Աճառյանի հիշողությունների համաձայն այս երաժշտական պատկերները կատարվել են Էջմիածնում սիրողների ուժերով, ըստ որում գլխավոր դերերում հանդես է եկել Կոմիտասը՝ «...ներկա գտնվողներին հրճվանք պատճառելով իր արտասովոր կոմիկական շնորհքի հանդես բերումով»[1]։ Ակադեմիկոս Աճառյանը նշում է նմանապես, «...այս ներկայացումն առաջացրեց հոգևորականության խորը զայրույթը, արտահայտելով իր կտրուկ բացասական վերաբերմունքը Կոմիտասի՝ նման արարքների նկատմամբ»։

Կոմիտասի վերոհիշյալ երաժշտական պատկերների ձեռագրերը տալիս են շատ հետաքրքիր նյութեր ու նոր տվյալներ կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգությունն ուսումնասիրողներին։ Նրանք նոր գծերով լրացնում են մեր պատկերացումը Կոմիտասի ստեղծագործական անհատականության մասին և թույլ են տալիս ավելի լայն պատկերացում ունենալ ազգային երաժշտության զարգացման ուղղությամբ նրա կատարած աշխատանքի մասին։

Դրա հետ միաժամանակ Կոմիտասի երաժշտական պատկերները պետք է կենդանի հետաքրքրություն ներկայացնեն Երևանի Երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի ստեղծագործական կոլեկտիվի համար՝ հայկական երաժշտության կլասիկի այս հետաքրքրական ու արժեքավոր ստեղծագործության վերջավորման, խմբագրման ու հետագա բեմական մարմնավորման հնարավորությունների պարզաբանման տեսակետից։ Պարոնյանի տեքստով գրված այս ստեղծագործությունը կարող է դառնալ Երաժշտական կոմեդիայի թատրոնի ռեպերտուարի զարդերից մեկը։

---

[1] *И. Еолян*, Комитас (опыт характеристики творческой личности), кандидатская диссертация, 1954, էջ 65 (ձեռագիր)։